

## **Աբովյան Միմա Լևոնի**

Ծնվել է 17.06.1983թ. Երևան քաղաքում: 2005թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի <<Գալիլի>> համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, 2009թ.՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրան՝ իրավագիտություն մասնագիտությամբ (գերազանցությամբ): 10.03.2008-01.11.2011թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար: 09.01.2012-03.05.2012թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար: 12.09.2012-26.10.2012թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: 16.10.2010թ. ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր: 01.11.2012-31.05.2013թթ. աշխատել է <<Իրավական եռանկյունի>> ՄՊԸ-ում՝ որպես իրավաբան: 07.06.2013-25.01.2018 թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: 26.01.2018թ-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական, շնորհիվ էլ է ՀՀ դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան: Ամուսնալուծված է, ունի երկու երեխա: